ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ)
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԱԹԵՐԹԻ

ՇԱԽՄԱՏ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 3
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ 7
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 8

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են «Շախմատ» առարկայի ուսուցչի կամավոր ատեստավորման քննության հարցաթերթի կառուցվածքը, պատասխանների ձևաթղթում լրացման կարգի բացատրությունը, առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

«Շախմատ» առարկայի ուսուցիչների ատեստավորման հարցաթերթը պարունակում է 56 առաջադրանք, որից 40-ը շախմատային, իսկ 16-ը՝ հանրակրթական չափորոշիչներին վերաբերող առաջադրանքներ են: Թեստի 56 առաջադրանքների ճիշտ պատասխանների դեպքում հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր (100%):

Հարցաթերթում 1-40-րդ առաջադրանքները վերաբերում են շախմատ խաղին, իսկ 41-56-րդ առաջադրանքները՝ հանրակրթության չափորոշիչներին և «Շախմատ» հանրակրթական առարկայի ուսումնառության հայեցակարգին:

Ուսուցիչների ատեստավորման թեստի առաջադրանքների կատարմանը տրամադրվում է 180 րոպե:

Կառուցվածքային առումով առաջադրանքները ունեն հետևյալ երկու հիմնական տեսակները.

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-54-րդ): Հարցաթերթում 1-52-րդ առաջադրանքների համար նշված են պատասխանի չորս, իսկ 53-54-րդ առաջադրանքների համար՝ երեք տարբերակներ: Յուրաքանչյուր առաջադրանքի համար հարցաթերթում նշված պատասխաններից միայն մեկ տարբերակն է ճիշտ:

<u>Գնահատման չափանիշը</u>. ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ զրո միավոր: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար՝ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո: Ընտրովի պատասխանով 1-54-րդ առաջադրանքների համար յուրաքանչյուր ճիշտ

պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Այլ նշանի դեպքում պատասխանը կհամարվի սխալ և կգնահատվի զրո:

<u>Ընտրովի պատասխանով առաջադրանքի օրինակ 1.՝</u>

«Քայլը սպիտակներինն է: Մատ երեք քայլից: Նշեք ճիշտ պատասխանը».

1) 1. Նa4 2) 1. Նa7 3) 1. Նa6 4) 1. Նa8



Ճիշտ պատասխանը 3-րդ տարբերակն է:

1)	
2)	
3)	X
4)	

<u>Ընտրովի պատասխանով առաջադրանքի օրինակ 2.՝</u>

«Նշվածներից «Շախմատ» առարկայի ուսուցման ո՞րերորդ տարվա ծրագրում է նախատեսված սովորողներին ուղղորդել այլընտրանքային լուծումներ գտնելու, իրավիճակները վերլուծելու և հաղթանակի ուղիներ գտնելու, բազմաթիվ տարբերակներ որոնելու գործողությունների կատարմանը, մարտավարական հնարքներով իրավիճակների ինքնուրույն ստեղծմանը».

1) առաջին
2) երկրորդ
3) երրորդ
4) չորրորդ

Ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է:

1)	
2)	X
3)	
4)	

2. Կարճ պատասխաններով առաջադրանքներ (55-56-րդ): Ուսուցիչը երկու սյունակների կետերից պետք է ընտրի և կազմի համապատասխան զույգեր: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան (ճիշտ կազմված զույգ) գնահատվում է 1 միավոր, այսինքն՝ եթե ուսուցիչը ճիշտ է կազմում երեք զույգերն էլ, ապա առաջադրանքի համար ստանում է 3 միավոր: Պատասխանի ձևաթղթում ձախ և աջ սյունակներում նշվում են միայն համապատասխան թվերը:

<u>Կարճ պատասխանով առաջադրանքի օրինակ՝</u>

«Երկու սյունակների կետերից ընտրեք և կազմեք համապատասխան զույգեր. ձախ սյունակում նշված են 2-րդ դասարանի «Շախմատ» առարկայի ուսումնառության ակնկալվող և չափելի վերջնարդյունքների թեմատիկ բաղադրիչները, աջ սյունակում՝ կոնկրետ վերջնարդյունքները».

1. Խաղադաշտ	1. Բացատրել փոխատեղման կանոնները
2. Մարտավարություն	2. Ցույց տալ և անվանել շախմատային գծերը. ուղղաձիգ, հորիզոնական և անկյունագիծ
3. Խաղաքարեր	3. Ստեղծել մարտավարական հնարքներ

Ճիշտ պատասխաններ:

Ձախ	Աջ
1	2
2	3
3	1

Պատասխանների ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը

Պատասխանների ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 3 հնարավորություն միայն ընտրովի պատասխանով՝ համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով 1-54-րդ առաջադրանքների համար սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի վերևի չհամարակալված տողի աջ վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև (համարակալված վանդակներից մեկի դիմաց) համապատասխան վանդակում դնել X նշանը:

Օրինակ՝

	41
1)	
2)	X
3)	
4)	

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Շախմատ» առարկայի ուսուցչի ատեստավորման թեստում առաջադրանքներն ընտրվել են ըստ հանրակրթական դպրոցի «Շախմատ» առարկայի ուսումնական ծրագրի:

Թեստում ընդգրկված են դպրոցական ծրագրի հետևյալ թեմաները.

- երկքայլանի մատային խնդիրներ,
- եռաքայլ մատային դիրքեր,
- ցուգցվանգքային երկքայլանի մատ,
- զինվորային վերջնախաղեր,
- մարտավարություն,
- նավակը զինվորի դեմ,
- թագուհին զինվորի դեմ,
- մատ 2 փղով,
- մատ՝ ձիով և փղով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանլետ Թումանյան, Շախմատ 3, ՈՒսուցչի ձեռնարկ: -Երևան, 2012թ.:
2. Հանլետ Թումանյան, Շախմատ 4 ՈՒսուցչի ձեռնարկ: -Երևան, 2013թ.:
3. Հանլետ Թումանյան, Շախմատ 4, Վարժությունների տետր: -Երևան, 2013թ.:
4. А.А. Тишков, В.И. Чепижный Шахматные задачи-минятюры. -Москва 1987.
5. Ю. Авербх, М. Бейлин, Путешествиев шахматное королевство. -Москва, 1988.
6. А. Е. Карпов, Е. Я. Гик, Неисчерпаемые Шахматы. -Москва. 1984.
7. Г. М. Каспаряан, Замечателные этюды. -Ереван, 1982.
8. Հանրակրթության պետական չափորոշիչ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
9. «Շախմատ» հանրակրթական առարկայի ուսումնառության հայեցակարգ: https://escs.am/files/files/2020-07-29/d33eb400a09b4db41e1aa052810bc8bf.pdf
10. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Շախմատ» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30 մարտի 2023 թ.-ի N 37-Ն հրաման: https://www.arlis.am/documentview.aspx?docID=176077

Ճանոթություն. գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: